

Ամէն տեսակ վտառակի համար որոշ շնորհ, որոշ չափով ընդունակութիւն պէտք է. եթէ արեգակը հազար անգամ աւելի լուսաւոր լինէր քան այժմ է՝ ի՞նչ օգուտ կ'ոյրին, երբ որ նա զուրկ է տեսնելու ընդունակութիւնից: Աերայի շնալիտօքն ասած միջոցին Փրկիչն իբրեւ նորօրինակ լուսոյ մի արեգակ կանգնած էր հրէից ժողովրդի հանդէպ և Սորա արտափայլած լոյսը տարածուում էր անխափ աւմէքի վերայ. հարկաւոր էր միայն մի փոքրիկ ունակութիւն այդ լոյսը տեսնելու, որ հոգին հեղհեղէր լեցուէր նորա ճառագայթներով և տեսնելու կարողութիւնը գնալով աւելանար ու զարգանար: Բայց փոյն եթէ մէկը տեսնել կարող էր, և աչքը փակեց ու չտեսաւ. ընդունակութիւնը երկաթէ գործիքի պէս է, որ գործի մէջ սրուում է, անգործադիր մընացած՝ ժանգոտում և անպէտքանում: Եւ որովհետեւ Աստուած չի կամենում երբէք, որ իւր տուած շնորհներն անգործադիր մնան, ուստի պէտք է խել ապաշնորհի ձեռքից նաեւ փոքր շնորհը և առատ շնորհ ունեցողին տայ, վերջնական նպատակն այն է, որ ամէն շնորհ իրեն համապատասխան գործադրութիւնը գտնէ և հոգեւոր ու բարոյական բարիքն առատանան. այնպիսի նպատակ է դա, որին հասնելու համար Մախաթանութիւնը չի խնայում շատ զօհեր տալ ճանապարհին:

Մենք մարդիկս շատ նեղօրէն ենք և մանր հաշիւներ անող. մեծ գործի համար մեծ աշխատանք գնենք ու զօհեր տալը շատ ծանր է գալիս մեզ: Մենք պահանջում ենք, որ բոլորեքնան շնորհալի լինեն, բոլորեքնան հիշատակեամբ հարստութիւն, զօրութիւն, երջանկութիւն ձեռք բերեն. բայց Մախաթանութիւնն այլ կերպ է տնօրինել. Սորա տեսութիւնը շատ լայն է և շատ ընդարձակ են Սորա հաշիւները. այսօր թոյլ է տալիս Սա, որ հարիւրը կորչի՝ դարեր յետոյ հազար ձեռք բերելու համար. Սորա գծած սահմաններում ոչինչ վտառակ առանց աշխատութեան, առանց զօհաբերութիւնների չի լինում: Ինչպէս որ նիւթական — բնական աշխարհում կանքը կոխ է և նիւթապէս զօրեղը յաղթանակում է այդ կռուի մէջ, այնպէս և հոգեւոր — բարոյական աշխարհում

անընդհատ կռուել պէտք է, և այդ կռուի մէջ ևս շատերն ընկնում են ու քչերն են յաղթանակ տանում: Մենք կոխը դադարեցնել չենք կարող, և դադարեցնել այն՝ կնշանակէր, կանքը դադարեցնել, բայց մենք կարող ենք աշխատել, որ նիւթական զօրութիւնը չճնշէ հոգեւորին և բարոյականին, որ առաջինը ծառայէ երկրորդին և ըստ կարելւոյն ընդարձակ ապարեզ բանայ նորա առաջ: Եւ երբ հակառակն ենք տեսնում ու մեր բարոյական զգացումը վիրաւորուում է, երբ տեսնում ենք, որ հոգեպէս զօրեղը ծառայում է նիւթականապէս զօրեղին՝ ընդունակը զուրկ է իւր շնորհը գործադրելու միջոցներից, որ անընդունակը բազմի բերմամբ յափշտակելի պինդ պահում է իւր ձեռքում՝ չպէտք է յուսահատուենք ու մտածենք, թէ անարդարութիւնն է իշխում աշխարհի վերայ. այլ համոզուած մնանք, որ վերջին յաղթանակը իսկական զօրեղինն է, և իսկական զօրութիւն՝ բարոյականը, հոգեւորն է միայն:



ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԿԵՏԵՐ

Ս. ԴՐՔԻ ՄԵՋՈՒ *

«Ո՛չ սա է հիւսանն որդի. ո՛չ մայր սորա կու՛նի Մարիամ: Եւ եղբարք սորա՝ Յակոբոս և Յովհաննէս և Սիմոն և Յովհաննէս Մատթ. ԺԳ. 55:

Մեկնարաններին շատ է զբաղեցրել յիւրախ այն խնդիրը, թէ ովքեր են այստեղ Փրկչի եղբայր կոչուածները: Մեր եկեղեցւոյ հայրերը տրամադիր են եղել նոցա Յովսէփի որդիք համարելու՝ մի ուրիշ նախկին կնոջից, անշուշտ լոկ այն պատճառով, որ կկամենային մի կողմից աւետարանի խօսքի ճշտութիւնը պահած լինել, թէ նոքա եղբայր էին և միւս կողմից ս. Աստուածամօր անարտա կուսութեան դադարաբի դէմ մեղանշած չլինել: Այս վերջին տեսակէան ի նկատի ունէին հար-

կաւ միշտ հին եկեղեցիներէի հայրերը ինչպիսի բացատրութիւն և տային. բայց բողոքականները ընդդէմ կաթողիկէ եկեղեցւոյ բողոքովն հակառակ տեսակէտը պաշտպանելով՝ ընդունում են նոցա տառացի իմաստով իրրեւ Բրիտանի կղերայրներ ա. Յովսէփից և նոյն մօրից: Այդ կղերայրներից երկուսի՝ Յակոբոսի և Յուդայի անունով մի մի թուղթ կայ Նոր Կտակարանի մէջ. իսկ առաջինն յայտնի է առհասարակ իրրեւ առաքելական շրջանի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկը որ Պետրոս և Յովհաննէս առաքելների հետ մէկտեղ եկեղեցւոյ սիւն էր համարուում (Գաղ. Բ. 9) և զրեթէ նոցանից առաւել պատիւ էր վայելում: Բրիտանիական շատ հին աւանդութիւնը նորան անուանում է Երուսաղէմի առաջին եպիսկոպոս որ թէպէտ իւր խիստ օրինապահութեան համար «արդար» կոչումն էր ստացել հրեաներից: Բայց նոցա մանուկութեան շարժած մի ժամին վայր զօրուեցաւ տաճարին կից բարձրութիւնից և քարկոծ եղաւ: Արդ. ամենայն հաւանականութեամբ ենթադրել կարելի է որ այս Յակոբը Մատթ. Ին. 56 հ.ում յիշուածն է և Մարկ. ԺԵ. 40 հ. համապատասխան տեղում «փոքրիկ» անուանուածը: Այդպէս էր կոչուում նա երեւի Զերեղիայի որդի Յակոբոսից տարբերուելու համար որ Փրկչի ամենամօտ աշակերտներից մէկն էր և անշուշտ «մեծ»-երի կարգում: Մտց նաև Նորա համարձուցից յետոյ մինչև Հերովդէս չորրորդապետից՝ իրրեւ առաջինն առաքելների մէջ, նահատակութեան պսակ ընդունելը: Փոքրիկ Յակոբոսի, որ իրրեւ «Տեսանեղբայր» մեծի մահից յետոյ մեծերի շարքը մտաւ՝ մօր անունն ուրեմն Մարիամ էր: և որովհետև նոյն այդ Մարիամը Յովհ. ԺԹ. 25 Մարիամ Կղէովպայ է կոչուում՝ նորա հօր անունն ևս Կղէովպա պէտք է լինէր: Այս վերջին տեղում կարգում ենք. «Ս. կային առ խաչին Յիսուսի մայրն Նորա և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ և Մարիամ Մաղդաղինացի», որից պէտք է հետևէր թէ Մարիամ Կղէովպան Աստուածամօր քոյրն է. բայց որովհետև անտեղութիւն է ընդունել թէ երկու քոյր նոյն անունն էին կրում, և որ Մարկոսի աւետարա-

նի մէջ նոյն պայմաններում յիշուած է Սողոմէ, իսկ Մատթէոսի աւետարանի մէջ՝ «մայր որդւոցն Զերեղեայ» շատ աւելի հաւանական է դառնում մի քանի մեկնիչների բացատրութիւնը որոնք «քոյր մօր Նորա» խօսքից յետոյ ստորակէտ են դնում և ընդունում նորան Մարիամ Կղէովպայից տարբեր անձնաւորութիւն. և այդպէս հետևում է, որ Աստուածամօր քոյրը Սողոմէն էր: Զերեղիայի որդւոց մայրը և Զերեղիայի որդի Յիսուսի մօր քրոջ որդի և սիրելի աշակերտ Յովհաննէս աւետարանիչը ինչպէս իւր իւր կղեր և հօր անունը իւր աւետարանում ոչ մի տեղ չի յիշել, այնպէս և այստեղ համեմատութեամբ թողել է մօր անունը: Մնում է որոշել թէ Յակոբոս որպիսի արիւնակցութեան շնորհիւ Բրիտանի կղերայրն էր. դորա ամէնից պարզ պատասխանը կլինի որ նորա հայրը Կղէովպա ա. Յովսէփի կղերայրն էր և նա լինելով Բրիտանի հետ միեւնոյն յարկի տակ մեծացած ու սննդակից, և հօրեղբորորդին համարուելով՝ հասարակօրէն ինչպէս և այժմ շատ տեղ ընդհանրացած սովորութիւն է, կղերայր էր կոչուում: Եղել են ենթադրողներ, որ Կղէովպոս և Ալփէոս նոյն անունն փոխակերպութիւններն են կամ միեւնոյն մարդու կրկնակի անունները, և հետևաբար Յակոբոս Փողոթնի կամ Տեսանեղբայրը նոյնն է, ինչ որ առաքելների ցանկի մէջ Յակոբոս Ալփեայ կոչուածը: Բայց այդ ենթադրութիւնը զիջուարանում են ընդունել ի միջի այլոց այն պատճառով որ Յովհ. Է. 3—10 և այլուր Բրիտանի կղերայրներն իրրեւ նորա քարոզութեան չհաւատացողներ ներկայանում են. թէպէտ քանի որ Յակոբոս համարձուցից յետոյ Նորա ամենատեսանելուն և ամէնից աչքի ընկնող աշակերտներից մէկն է հանդիսանում՝ մտածելու տեղիք մնում է, որ այդ մէկ կղերայրը հակառակ ընդհանուր արամազրութեան հետզհետէ զօրացող հաւատով մօտենար իւր աստուածային կղեր և արդէն Նորա կենդանութեան ժամանակ Նորա առաքելների շարքի մէջ մտնէր: Մեր հայրերի ենթադրութիւնը, թէ Բրիտանի կղերայրները ա. Յովսէփի որդիներն էին մի ուրիշ կնոջից ստի-

պուժ է ընդունել: թէ նոքա աւելի մեծ էին հասակաւ: բայց աւետարանի բոլոր տեղերում ուր առհասարակ խօսք է լինում Բրիստոսի ընտանեկան հանգամանքների մասին՝ պարզ երևում է, որ նա է տան մէջ (ս. Յովսէփի մատուցումը) մեծը: Ընդ յայտնի չէ, թէ արդեօք որ եւ է քննադատ այս տեսակետից ուշադրութիւն դարձրել է այն կէտի վերայ, որ Բրիստոս խաչի վերայից սիրելի աշակերտին է յանձնում Իւր մօրը և սա այնուհետև միշտ նորա մօտն է մնում (Յովհ. ԺԹ. 27): Ըստ իս եթէ Յովսէփ որ եւ է որդի ունեցած լինէր՝ հարադատ կամ խորթ ս. Կոյսի համար, այդպիսի կարգադրութիւն անկու տեղիք չէր մնայ: մինչդեռ եթէ եղբայրները Բրիստոսի հօրեղբորդիք էին՝ ոչինչ անանդութիւն չկար, որ Նորա մայրը Նորա մօրաբարձ որդու մօտ կենար:

«Ձի իցեն ոմանք ի սոցանէ որք աստ կան որք ոչ ճաշակեցեն զմահս, մինչև տեսցեն զԱրդի Մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով: (Մատթ. ԺԶ. 28. համ. Մարկ. Ը. 39. Ղուկ. Թ. 27)

— Այս կէտը մէկն է այն դժուարութիւններից, որոնք հանդիպում են Բրիստոսի Իւր երկրորդ զաւստեան մասին տրած գուշակութիւնները պարզաբանելիս: Դիտաւոր դժուարութիւնն այստեղ յառաջ է գալիս նորանից, որ զանազան առթիւ և զանազան իմաստով եղած գուշակութիւններն ի մի են ձուլուել աւանդութեան մէջ և այնպէս են պատմուած աւետարանում: որ շատ հեշտ է մի իմաստը միւսի հետ շփոթել: Դատաստանի մասին խօսելիս Բրիստոս երբեմն ի նկատի ունի մի զազաւարական դատաստան, որ արդէն Իւր աշխարհ զաւրով սկսուել է մարդոց մէջ՝ մինչ մէկը Նորա քարոզութիւնն ընդունելով արժանի է գանուել Աստուծոյ շնորհաց, միւսը մերժելով՝ դատապարտել է ինքն իրեն (Յովհ. Գ. 19). ապա մի դատաստան յատկապէս հրեաների համար, որ պէտք է տեղի ունենար Երուսաղէմի կործանմամբ, երբ ճշմարիտ Մեսիային ի խաչ հանողներն իրենց ծայրայեղ անիրաւութեան պատիժը պէտք է կրէին. և վերջապէս մի վերջին դատաստան, որով ընդհանրապէս բոլոր արգարներն ու մեղա-

ւորներն իրենց գործոց համար վերջնական հատուցումն պէտք է ընդունէին: Արդ, հրեայ մարդը Բրիստոսի ժամանակ այնպէս էր նախում Երուսաղէմի վերայ, որ նորա կործանումից յետոյ աշխարհի գոյութիւն երևակայել չէր կարող: ուստի նշխարեւում էր այն դատաստանը, որով Երուսաղէմը պէտք է կործանուէր՝ վերջին ահեղ դատաստանի հետ և նորա մտքում աւանայ մէկի մասին լսած խօսքը շարունակ էր միւսի հետ: Այլ և առաջին դարում հաւատացեալների փափազը Բրիստոսի իշխանութիւնը փառօք և զօրութեամբ հաստատուած տեսնել այնքան մեծ էր, որ նոքա տրամադիր էին դատաստանի մասին տաւ Բրիստոսի բոլոր խօսքերը Նորա վերջին զաւստեան վերադրել և ըստ կարելոյն մօտիկ ապագայում զնել այդ գալուստը: Աւետարանի վերեւ յառաջ բերած հատուածի մէջ ժամանակի որոշումը վերաբերում է անկասկած Երուսաղէմի կործանման: Բիշ առաջ Բրիստոս խօսում է Իւր չարչարանքի և մահուան մասին, որով հրեաները պէտք է Նորան իրրեկ կեղծ Մեսիայի դատապարտէին. բայց զեռ ժամանակակից սերունդը վերջացած չէր լինի, զեռ կրանուէին Նորա մահուան ականատես մարդիկ, որոնք իրենց աչքով կանանէին: Թէ ինչպէս այդ ամբարշտ ազդը իւր սոսկալի յանցանքի համար ամենամեծ պատիժը կկրէր, իսկ ճշմարիտ Մեսիան անմիտ և յաղթական ելնելով աւերածների միջից՝ կերթար Իւր թագաւորութիւնը հաստատելու հեթանոսների աշխարհում: Աւետարանի խօսքերը վերեւ բացատրած պատճառներով այնպէս են հնչում յիրաւի, որ կարծես վերջին զաւստեան մասին հասկանալ պէտք է. բայց իրօք Երուսաղէմի կործանման նկատմամբ պէտք է խօսուած լինին և ինչպէս յայտնի է, այդ մշտնջող ամենայն ճշտութեամբ կատարուել են:

«Աստն այսորիկ թողցէ ոյր զհայր և զմայր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ի մարմին մի: (Մատթ. ԺԺ. 5. համ. Մարկ. Ժ. 7)

— Այս խօսքերն, ինչպէս զիտենք, Բրիստոս Իւր կողմից չէ ասում, այլ վերջնում է շին Կապարանից (Ժնն. Բ. 24): Փարիսեցիք Նորան փորձում էին, կամենալով

այնպիսի բան ասել ապա Նորան ամուսնալուծութեան մասին որ հակառակ լինէր Մովսէսի դրած օրէնքին և դատապարտէին Նորան իբրեւ օրինադանցիւ Բայց Փրկիչը նոցա առաջն է դնում մի շատ աւելի հին սկզբնական դեռ Ադամի և Եւայի օրով հաստատուած օրէնք որով ամուսնութիւնն իբրեւ անքակտելի կապ է ներկայանում Ծ. պատուիրանի դէմ ոչինչ չկայ այստեղ անշուշտ Թէ ինչ սկզբունք էր քարոզում Փրկիչը հօր և մօր պատուելու նկատմամբ՝ պարզ արտայայտել է Նա մի ուրիշ տեղ (Մարկ. Ը՝ 9—13)՝ ուր այդ բարոյական պարտականութիւնը փարիսեցիներին հակառակ աւելի բարձր է դասած քան որ և է արտաքին նուիրարեութիւն Աստուծոյ տաճարին Իսկ իբր Նա իբրեւ աստուածային անցիկի պատգամ է հաշակում այն պատուէրը թէ մարդ մինչև իսկ իւր հօրն ու մօրը պէտք է թողնէ ու ամուսնու ետեւից զնայ դորանով շեշտում է միայն թէ որչափ ամուր օրչափ սուրբ և նուիրական է ամուսնութեան կապը որպիսի մեծ պարտականութիւններ է դնում մարդու վերայ՝ պարտականութիւններ որոնց առաջ ուրիշները պէտք է նսեմանան և թէ մինչև իսկ այնպէս կարեւոր լինեն ինչպէս է հօր ու մօր պատուելու պարտքը:



ԱՆԳՂԻՅ ԸԼՆԱԶԱՆ ԵՎ ԵՆԻՆԵՐԸ *

Անգղիոյ բողոքական եկեղեցին երկու գլխաւոր բաժանումն ունի Գին եպիսկոպոսական եկեղեցի:

* Ներկայ համառօտ ակնարկը շնորհակալութեամբ ընդունեցիմք Մարգարէի ընդհանրաց զսրոցի և անկիւն ուսուցչապետ Մեծ պ. Թումանյանից որ յայտնի է իւր զմարդ սրկածով և անգղիայում իւր պատմական կողակցի նա միասին յօդուս քշուտ ազգակցաց ցոյց տուած գործունէութեամբ Այժմ ևս հայրական որբանցի զկիսար և Լոնդոնում և խնդրում է մեզ յայտնել որ ռամկանայ քշուտ հայրականների որբերն ուրախութեամբ կրնան աշ որբանցում և անգղ. զպրոցներում կանոնաւոր կրթութիւն կստանան ապա զանազան առնեսներ սովորելով կարող են ապագայում պիտանի լինել իրենց հայրենիքին:

որ անձուկ մտք կուի Անգլիական եկեղեցի և միւսն է ԱԶԱՏ եկեղեցիք կոչուածը Սոցա էական տարբերութիւնը ոչ այնչափ վարդապետական է որչափ ձեական Բուն տարբերութիւնը կառավարութեան հետ ունեցած յարաբերութեան մէջ է Առաջինը կառավարութեան հետ պաշտօնական յարաբերութեան մէջ է անկէ նպաստ կանոն և իր ներկայացուցիչ եպիսկոպոսունք իբր լորտեր և Անգղիոյ լորտերու ժողովի անդամ են և պետութեան զործոց կը խառնուին րայց միւս կողմանէ ալ այս առաւելութիւնը կը տուածն այնու զի և կառավարութիւն իւր կողմանէ նոցա եկեղեցական գործոց կը միջամտի Զոր օրինակ եպիսկոպոսունք կառավարութեան կանոնաւորին Ասիկայ եպիսկոպոսական կը կոչուի զի եպիսկոպոսներով կը կառավարուի որոց գլուխն է Բենեթըրպրի աբբեպիսկոպոսը (Բենեթըրպրի փոքրիկ քաղաքը Անգղիոյ Էքսմիսթընն է):

Իսկ ազատ եկեղեցիք կառավարութեան հետ յարաբերութիւն չունին ոչ անկէ նպաստ կընդունին ոչ ալ հրաժան Իրենք իրենց կը բաւեն իրենց բոլոր ծախքեր կամաւոր տրուք կը հօգան և իրենց եկեղեցականներն իրենք կընտրեն և կարծակին Ասոնք յընթաց ժամանակաց եպիսկոպոսական եկեղեցիէն բաժանեալ են ի սկզբան հաշածեալ րայց վերջապէս ազատութիւն ստացած են Այժմ քաղաքացիական ամէն ազատութիւն ունին րայց ի կառավարութեան գրամական նպաստ ընդունելէ Անգլանուր առմամբ կրնայ ըսուիլ թէ եպիսկոպոսական եկեղեցին պահանջողական կուսակցութեան կը վերաբերի և ազատ եկեղեցիք ալ ազատական կուսակցութեան թէ և շատ բացառութիւնք կան Զոր օրինակ ազատական կուսակցութեան յայտնի մեծ պետը Մ. Կլատսթոն եպիսկոպոսական էր Սա գրեթէ անբացառիկ է սակայն որ ազատ եկեղեցիք միշտ ազատական կուսակցութեան յարած են Ազատ եկեղեցիք ի սկզբան տրեւար և սակաւութիւն էին րայց այժմ Անգլիական եկեղեցւոյ կը հաւասարին թէ թուով և թէ բարոյական զօրութեամբ թէ և հարուստ և ազգեցիկ դասակարգը դեռ անգլիական եկեղեցւոյ կը վերաբերի Խնդիր է սակայն թէ այդ դասակարգը ի կրօնային գործս զօրութիւն նկատելու է թէ տկարութիւն:

Այս երկու եկեղեցեաց ուրիշ կարեւոր տարբերութիւնք հետեւեալքն են Եպիսկոպոսականք ծէսեր և արարողութիւններ ունին և այն միակերպ ամէն եկեղեցեաց պարտաւորիչ եկեղեցացն պաշտամունք հանդիսաւոր են կղերականք և դպիրք զպետաւորեալ և այլն մինչ ազատ եկեղեցիք ընկալեալ ծէս կամ արարողութիւնք չունին եկեղեցական պաշտամունք պարզ են և ամէն եկեղեցի ազատ է ըստ կամս կատարել կղերականք